ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ԱՅՐՈՒՄԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Թ170<<17>> դեկտեմբերի 2015թ
Հայաստանի Հանրա պետություն Լոռու մարզ
Մեծ Այրում համայնք փ4 շենք 1
հեռ.077456612 Email. metsayrum.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա.Նալբանդյանին

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Մեծ Այրում համայնքի ավագանու թ28,29,30,31,32,33 որոշումները; Առդիր <<14>>թերթ;

Համայնքի ղեկավար Ս.Նազարյան

ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
« 14 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20 15 Թ. N 28 -Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Մեծ Այրում գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների թ1.թ2;
2. Ուժը կորցրած ճանաչել Մեծ Այրում ավագանու2015 թվականի հունիսի 30-ի N15 -Ն որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

	ԱԱՀ	ԿՈՂՄ-3	ԴԵՄ	ՁԵՌՆՊ
1	Պապիկ Առուշանյան			
2	Սոֆյա Այվազյան			
3	Սամվել Միրզոյան			

Համայնքի ղեկավար Ս.Նազարյան

Հավելված թ2

Մեծ Այրում համայնքի ավագանու

2015թ դեկտեմբերի 14-ի թիվ 28-Ն որոշմամբ

Մեծ Այրում համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը;

1.Աշխատակիցների թվաքանակը 6;

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը;

	Հաստիքի անվանումը	Հաստիքային Միավոր	Պաշտոնային դրույքաչափ
1.	Տնօրեն	1	112000
2.	դաստիպրակ	0.7	86000
3.	դայակ	0.5	39000
4.	խոհարար	1	73000
5.	հավաքարար	1	73000
6.	բանվոր	1	73000

Հավելված թ1

Մեծ Այրում գյուղական համայնքի ավագանու

20 15 թվականի _ դեկտեմբերի_14__-ի N 28____ որոշման

ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11 :
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	206.000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	81.000
Համայնքի ղեկավարի օգնական	1	78.000
Աշխատակազմի քարտուղար	1	114.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ	1	100.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	100.000
Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	2	74.000
Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	1	73.500
Տեխ. սպասարկման անձնակազմ		
Վարորդ	1	78.000
Բանվոր	1	73.000

Համայնքի ղեկավար՝ Ս. Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>>Դեկտեմբերի 2015 թ. N29-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Այրում գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	Համայնքի ավագանու անդամներ	*կողմ-3*	*դեմ-0*	*ձեռնպահ-0*
1	Պապիկ Առուշանյան			
2	Սոֆյա Այվազյան			
3	Սամվել Միրզոյան			

Համայնքի ղեկավար՝ _____Ս.ՆԱԶԱՐՅԱՆ_

2015թ. դեկտեմբերի 15

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Այրում գյուղական համայնքի ավագանու
2015 թ. Դեկտեմբերի 14 -ի թիվ 29-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներիհամար՝ 10000 դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1՝-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 45000 դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 90000 դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

4000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

5000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

3000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացմ
աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շեն
գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանք
օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակությ
փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափ
կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանվա
նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառակա
նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտայի
չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կա
սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր
շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն
հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, .քաղաքաշինական այլ
օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

3000 դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ
հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր
եռամսյակի համար՝ 6000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական
շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի
համար՝ 6000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել
յուրաքանչյուր օրվա համար ՝ 300 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ
առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված
նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական
տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 180000__դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության
համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝__50000_դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության
համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման
դեպքում՝ 6000 _դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման
դեպքում՝ 500 դրամ.

5)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված
սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական
կամ հեղուկացված նավթային գազերի մանրածած առևտրի կետերում հեղուկ վառելիքի և
(կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական
հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար
սահմանել՝ 8000__դրամ.

6)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ __10000_____դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 80000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 400000 դրամ

4) խաղատների կազմակերպման համար՝ 600000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 400000դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 140000դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1500 դրամ

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3000 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 2000 դրամ:

Հայաստանի Հանրապետության հմայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ _____80000_դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝__5000 դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը ,փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝3000 դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝3000 դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 2000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ /Ս.Նազարյան/

14 Դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>>Դեկտեմբերի 2015թ. N30-Ա

ՄԵԾ ԱՅՐՈՒՄԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ և ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<ՏԻՄ>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջով՝

Մեծ Այրում համայնքի ավագանին որոշում է
1.Հաստատել 2015թվականի Մեծ Այրումի գյուղապետարանի և նրա ենթակայության տակ գտնվող հիմնարկների գույքագրումը;
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից;

Ավագանու անդամներ

	ԱԱՀ	ԿՈՂՄ_3	ԴԵՄ_	ՁԵՌՆՊԱՀ_
1.	Պապիկ Առուշանյան			
2.	Սոֆյա Այվազյան			
3.	Սամվել Միրզոյան			

Համայնքի ղեկավար Ս.Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Այրում համայնք, գ. Մեծ Այրում
հեռ.077456612

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» դեկտեմբերի 2015 թվականի N31- Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2015 թվականի 4-րդ եռամսյակում Մեծ Այրում համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3.Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

	Ազգանուն, Անուն	Կողմ- 3	Դեմ	Ձեռնպահ
1	Պապիկ Առուշանյան			
2	Սոֆյա Այվազյան			
3	Սամվել Միրզոյան			

Համայնքի ղեկավար՝ Ս.Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>>Դեկտեմբերի 2015թ. N32 –Ն

ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<ՏԻՄ>>ՀՀ օրենքի 16-րդ 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>>ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով

Մեծ Այրում համայնքի ավագանին որոշում է

1.Հաստատել Մեծ Այրում համայնքի 2016թվականի բյուջեն;
Ելքեր-24591.600
Մուտքեր-27591.600

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թվականի հունվարի 1-ից ;

Ավագանու անդամներ

	ԱԱՀ	ԿՈՂՄ-3	ԴԵՄ-	ՁԵՌՆՊԱՀ-
1.	Պապիկ Առուշանյան			
2.	Սոֆյա Այվազյան			
3.	Սամվել Միրզոյան			

Համայնքի ղեկավար Ս.Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Այրում համայնք, հասցե փող 1,

Հեռախոս՝ 077456612
Էլ.Փոստ՝ metsayrum..lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 14 >> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 33-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի- 14-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մեծ Այրում համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 39-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Մեծ Այրում համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ-3	Դեմ-0	Ձեռնպահ-0
Պապիկ Առուշանյան			
Սոֆյա Այվազյան			
Սամվել Միրզոյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Նազարյան

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Մեծ Այրում համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14 --ի **N33-Ա որոշման**

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1 Մովսեսյան Անուշ --------- 10000 /տասը հազար/ դրամ,

2.Դիվանյան Սուսաննա --------- 15000/տասնհինգ հազար/ դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 25000/քսանհինգ հազար /դրամ:

ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.Ալավերդյան